

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/5

2 հուլիսի 2013 թ.

Քննարկվեց <Բիպակ> ՍՊԸ 13.06.2013 թ-ի դիմումով բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ հսկիչ գնումների արդյունքերի վերաբերյալ 13.05.2013 թ-ի թիվ 2214816 արձանագրության դեմ:

<Բիպակ> ՍՊԸ տնօրենի դիմումում մասնավորապես նշված է.

Ներկայացնում եմ 2013 թ-ի մայիսի 6-ին Արաբկիրի «Տ Կողմից թիվ 2214816 հանձնարարագրի համաձայն <Բիպակ> ՍՊԸ Բաղրամյան պողոտա 3-րդ փակուղի, 4/3 հասցեում գտնվող ֆիրմային խանութում տեղի ունեցած հսկիչ գնման մանրամասնությունը, որն իմ կարծիքով տեղի է ունեցել կոպիտ խախտումներով և ակնկալում եմ Ձեր աջակցությունը դրա հետևանքները վերացնելու համար, մասնավորապես՝ թիվ 2214816 արձանագրությունն անվավեր ճանաչել:

2013 թ-ի մայիսի 6-ին ժամը 16⁰⁰-ի սահմանում խանութի առաջ կանգ է առնում տաքսի ավտոմեքենա, որից իջնում է 25-30 տարեկան աղջիկ, մտնում է խանութ և ներկայանում որպես Ջեյթունի հացի փռում նոր բացված խմորեղենի արտադրամասի ներկայացուցիչ: Մեր վաճառողի հետ զրույցի է բռնվում, կատարում հաճոյախոսություններ, առաջարկում համագործակցել և այլն: Գնում է տորթի ամաններ 6800 դրամի, որի դիմաց վճարում է 7000 դրամ, վաճառողը տրամադրում է ՀԴՄ կտրոն և 200 դրամ: Սակայն, աղջկան ճանապարհելու ժամանակ խանութի դռան մոտ աղջիկը վաճառողին ասել է, որ իր մոտ մնացել է միայն 10 ԱՄՆ դոլար և տաքսուն վճարելու համար դրամ չունի: Արդյունքում աղջիկը խնդրել է վաճառողին փոխարինել 10 դոլարը դրամով: Վաճառողը տեսնելով աղջկա շտապողական վիճակն իր անձնական 4100 դրամը տվել է աղջկան և վերցրել 10 դոլարը, որից հետո աղջիկը տաքսիով հեռացել է: Նրա հեռանալուց մոտավորապես 5-6 րոպե հետո Արաբկիրի «Տ 2 աշխատակից, որոնց վաճառողը դեմքով անձամբ մինչ այդ ճանաչում էր, ավտոմեքենայով մոտենում են խանութին և մեքենայից հանում աղջկա գնած տորթի ամանները, մտնում խանութ և հայտարարում, որ հսկիչ գնման ստուգում են իրականացնում: Ցույց են տվել հանձնարարագիրը և առանց ստորագրել տալու պահել են այն, որպեսզի անհրաժեշտության դեպքում ներկայացնեն, որ իբր խոչընդոտել ենք ստուգման գործընթացին և տուգանեն 250.000 դրամով:

Տեսուչները վաճառողին ասում են, որ նա դոլարով առևտուր է կատարել: Վաճառողը հրաժարվում է այդ մեղադրանքից, որից հետո նրանք իրենց հեռախոսի մեջ ցույց են տալիս 10 դոլարի նկարը և համարը ու ասում են, որ այն գրանցված է հարկային տեսչությունում և գիտեն, որ այն գտնվում է վաճառողի գրպանում: Այդ ընթացքում խանութ է գալիս <Բիպակ> ՍՊԸ 5% փայատեր Ա.Բաբայանը, որի ներկայությամբ վաճառողը գրպանից հանում և վերադարձնում է 10 դոլարը և բացատրում, որ դոլարով առևտուր չի իրականացվել, սակայն տեսուչները կազմում են սնագիր արձանագրություն վաճառքի փաստի կապակցությամբ և պահանջում վաճառողից ստորագրել այն: Վաճառողը հրաժարվում է ստորագրել և պահանջում է վերցնեն իր բացատրությունը, սակայն տեսուչները սպառնում են, որ եթե արձանագրությունը չստորագրվի, դա կդիտվի որպես խոչընդոտում ստուգման գործընթացին: Տեսուչները նշել են, որ վաղը կարող են ներկայանալ հարկային տեսչություն հարցի քննարկման համար և եթե անհրաժեշտություն լինի, բացատրությունը կկցվի արձանագրությանը կամ արձանագրությունը չեղյալ կհամարվի: Ա.Բաբայանը հետագա անախորժություններից խուսափելու համար վաճառողից պահանջել է ստորագրել արձանագրությունը և վաճառողն առանց կարդալու ստորագրել է այն:

Այսպիսով, հարկային տեսուչներ Ս.Ղազարյանը և Կ.Խաչատրյանը անօրինական ձևով ներ են գրավել երրորդ անձի, որի անունը չկա հանձնարարագրի մեջ և հրահանգել, որ ստեղծվի վստահություն վաճառողի մոտ և ամեն գնով 10 դոլարը հանձնի նրան: Ստուգումից մեկ օր անց՝ մայիսի 7-ին, հարկային տեսչությունում ես ստորագրեցի հանձնարարագիրը:

2013 թ-ի մայիսի 13-ին միայն կազմվում է սահմանված կարգին համապատասխան արձանագրություն և առանց մեր ստորագրության փոստով ուղարկվում է մեզ, որի կապակցությամբ ես իմ առարկություններն եմ ներկայացրել Արաբկիրի ՀՏ: Գործի մեջ կցված է հարևան ընկերության պահակի բացատրությունը, որը ականատես է եղել աղջկա գալ-գնալուն, այնուհետև 5-6 րոպե հետո տեսուչների ավտոմեքենայով խանութին մոտենալուն և աղջկա գնած տորթի ամանները խանութ բերելուն:

Այս դիմումը ուշ եմ ներկայացնում, քանի որ 01.06.2013 թ-ին դիմել ենք Արաբկիր ՀՏ պետին, որպեսզի հաշվի առնելով ստուգման պրոցեսի խախտումները, կասեցնի գործի վարույթը, սակայն 2013 թ-ին հունիսի 13-ի համար ծանուցագիր ենք ստանում վարչական պատասխանատվության մասին, որից հետո ներկայացնում եմ դիմումս:

Նկատի ունենալով վերը նշված փաստերը դիմումատուն խնդրում է միջոցներ ձեռնարկել վարչական պատասխանատվության չենթարկելու համար, քանի որ փաստացի 10 դոլարով գնում չի իրականացվել, իսկ այն, որ տեսուչներն արձանագրության մեջ գրել են, որ առևտուրն իրենք են կատարել, իրականության հետ կապ չունի:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 19.04.2013 թ-ի թիվ 2214816 հանձնարարագրի <Բիպակ> ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ գնում: Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքերի վերաբերյալ թիվ 2214816 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշվել է, որ ս.թ. մայիսի 6-ին ժամը 16:12-ին ք.Երևան, Բաղրամյան պող., 3-րդ նրբ. 4/3 հասցեում գործող մանրածախ առևտրի կետից գլխավոր հարկային տեսուչ՝ Սերգեյ Ղազարյանի կողմից կատարվեց հսկիչ գնում ընդհանուր արժողությամբ 6800 դրամի: Գնվեց տորթի տարաներ՝ 5 հատ միավորի գինը 600 դրամ, 3 հատ միավորի գինը 230 դրամ, 4 հատ միավորի գինը 100 դրամ, 3 հատ միավորի գինը 270 դրամ, 2 հատ միավորի գինը 160 դրամ, 2 հատ միավորի գինը 100 դրամ, 5 հատ միավորի գինը 280 դրամ, որի դիմաց վճարվեց 10 ԱՄՆ դոլար և 2700 դրամ: Վճարված 10 ԱՄՆ դոլարը և 2700 դրամը վաճառողի կողմից ընդունվեց: 10 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը և 2700 դրամը վաճառողի կողմից մուտքագրվեց ՀԴՄ և տրամադրվեց ՀԴՄ կտրոն:

Քննարկմանը ներկա գտնվող գլխավոր հարկային տեսուչ Սերգեյ Ղազարյանը պնդեց, որ հսկիչ գնումն իրականացվել է իր կողմից և, որ գնված ապրանքների դիմաց՝ գումարով 6800 դրամի, վճարվել է 10 ԱՄՆ դոլար և 2700 դրամ: Վերջիններս վաճառողի կողմից ընդունվել են, մուտքագրվել են ՀԴՄ և տրամադրվել է ՀԴՄ կտրոն:

Վերոգրյալը հիմնավորվում է 06.05.2013 թ-ին կազմված <Վաճառված ապրանքների հետընդունման> ակտով: Մասնավորապես, վերջինումս նշվել են հետ ընդունված ապրանքների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև վերադարձված 10 ԱՄՆ դոլարի և 2700 դրամի մասին: <Վաճառված ապրանքների հետընդունման> ակտը ստորագրվել է արձանագրությունում նշված ապրանքների վաճառքն իրականացրած Եփրեմ Յարայանի կողմից:

Բացի այդ, 06.05.2013 թ-ին կազմվել է արձանագրություն, որում մասնավորապես նշվել է, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 19.04.2013 թ-ի թիվ 2214816 հանձնարարագրի <Բիպակ> ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ գնում 6800 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարվել է 10 ԱՄՆ դոլար և 2700 դրամ: Կազմակերպության վաճառող

Ե.Յարայանն ապրանքի հետ միասին տրամադրել է նաև ՀԴՄ կտրոնը: Նշված արձանագրությունը ստորագրված է հսկիչ գնմանը մասնակցած անձանց և վաճառող Ե.Յարայանի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ վերագրյալ փաստական հանգամանքները, ըստ էության, հիմնավորում են «Բիպակ» ՍՊԸ աշխատակից Ե.Յարայանի կողմից արտարժույթով ապրանքների վաճառք իրականացնելու հանգամանքը:

Հանձնաժողովի 25.06.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն արձանագրությունը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, դիմում-գանգատը և գանգատին առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը սովել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Արձանագրությունը թողնել է անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ